ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/93

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Պապյանի (լիազորագիր՝ տրված 15.04.2021թ.),

«Երքաղլույս» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ

Ա. Մինասյանի և Ա. Անանյանի (լիազորագիր՝ տրված 15.04.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.04.2021թ. թիվ 26/26-1/5379-2021 գրությամբ «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Երքաղլույս» ՓԲԸ-ի 02.04.2021թ. թիվ 68/418 գրության հիման վրա 12.04.2021թ. թիվ 26/26-1/5379-2021 գրությամբ նախաձեռնել է «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/93 ընթացակարգի շրջանակներում 16.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 2-3 աշխատանքային օրով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը՝ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

«ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ն 19.04.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ՆԳ-2021/93 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը՝ գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

Երևան համայնքի «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/7 ծածկագրով մրցույթի հրավերի համապատասխան 03.03.2021թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վանգակ» ՍՊԸ-ն: Ըստ 10.03.2021թ. հրապարակման՝ «Վանգակ» ՍՊԸ-ն ճանաչվել է մրցույթի հաղթող: 16.03.2021թ. «Վանգակ» ՍՊԸ-ին է ուղարկվել ծանուցում պայմանագիր կնքելու մասին, համաձայն որի «Վանգակ» ՍՊԸ-ն առավելագույնը մինչև 30.03.2021թ. պետք է «Երքաղլույս» ՓԲԸ-ի հետ կնքեր պայմանագիր, մինչդեռ պայմանագիրը չի կնքվել հետևյալ պատճառով՝

համաձայն մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի՝ պայմանագիրը կնքելուց հետո «Վանգակ» ՍՊԸ-ն 21 օրացուցային օրվա ընթացքում պետք է արտադրեր և մատակարարեր 1150 լրակազմ «Տղամարդու բանվորական ամառային արտահագուստ» ապրանքատեսակը, որի լրակազմի մեջ մտնում է բաճկոն, տաբատ, շապիկ և գլխարկ: Ըստ հրավերի՝ լրակազմի բաղադրամասերի արտաքին տեսքը պետք է համապատասխանի ներկայացված նմուշին: Դեռևս մարտի 10-ին, տեղեկացված լինելով, որ «Վանգակ» ՍՊԸ-ն ճանաչվել է մրցույթի հաղթող, անմիջապես ձեռնամուխ ենք եղել արտադրվելիք լրակազմի կարման նախապատրաստական աշխատանքներին, որպեսզի սահմանված 21-օրյա ժամկետում հասնենք ամբողջ խմբաքանակի պատրաստումը: Այդ նպատակով կարել ենք տաբատի ու բաճկոնի մեկ օրինակ և ներկայացրել «Երքաղլույս» ՓԲԸ-ի տնօրինության հաստատմանը: Տնօրինությունը հավանություն է տվել տաբատի ու բաճկոնի արտաքին տեսքին, կարի ձևին ու որակին՝ առարկություն ներկայացնելով

միայն կտորի կապույտ գույնի երանգի նկատմամբ: Այդ պատճառով մեր կողմից ներկայացվել են կապույտ գույնի ևս 3 երանգների գործվածքներ՝ երանգի ընտրությունը թողնելով ՓԲԸ-ի տնօրինության հավանությանը: Այս անգամ տնօրինությունը դարձյալ հավանություն չի տվել ներկայացված գործվածքների բաղադրությանը, որոնք իբր չեն համապատասխանում տեխնիկական բնութագրում պահանջված գործվածքի բաղադրությանը: Դրանից մեզ համար ակնհայտ դարձավ, որ «Երքաղլույս» ՓԲԸ-ի տնօրինությունը արհեստական խոչնդոտներ է ստեղծում մեր կազմակերպությանը պայմանագիր կնքելուց զերծ պահելու համար: Առանց համապատասխան նյութագիտական փորձաքննության, տարօրինակ է թե ՓԲԸ-ի ղեկավարությունը ինչպես է որոշել ներկայացված գործվածքի 4 նմուշների բաղադրությունը և դրանց անհամապատասխանելիությունը տեխնիկական բնութագրում սահմանված չափանիշներին: Եթե պայմանագիրը կնքելուց հետո այդ հարցը կարելի էր կարգավորել համապատասխան նյութագիտական փորձաքննությամբ, ապա անլուծելի մնաց գլխարկի հետ կապված հարցը: Բանն այն է, որ տեխնիկական բնութագրում պատկերված է միայն գլխարկի արտաքին տեսքը, մինչդեռ տեխնիկական բնութագրում նշված է, որ գլխարկի ներսի հատվածում պետք է լինի պլաստիկե ամորտիզացնող ներդիր՝ նախատեսված գլուխն թեթև մեխանիկական ազդեցություններից պաշտպանվելու համար: Գլխարկի կտորային հատվածը առանձնանում է ներդիրից ինքնակպչուն ժապավենների միջոցով՝ դառնալով 1 առանձին միավոր: Քանի որ, տեխնիկական բնութագրում պատկերված չէ պլաստիկե ամորտիզացնող ներդիրը, տարաձայնություններց խուսափելու նպատակով «Երքաղլույս» ՓԲԸ-ի տնօրինությունից բազմաթիվ անգամներ բանավոր, իսկ 4 անգամ գրավոր խնդրել ենք տրամադրելու գլխարկի նմուշ, ինչը նախատեսված է նաև մրցույթի տեխնիկական բնութագրով: Սակայն ամեն անգամ ՓԲԸ-ի տնօրինությունը հրաժարվել է մեզ տրամադրելու գլխարկի նմուշ, պատճառաբանելով, որ հիմնարկում գլխարկի մնուշ գոյություն չունի, այն վերցրել են ինտերնետային կայքերից, հրաժարվելով անգամ հուշելու, թե կոնկրետ որ կայքից: Քանի որ, ՓԲԸ-ն ուղղորդող որևէ նմուշ հրաժարվեց տրամադրել անհասկանալի էր պլաստիկե ամորտիզացիոն ներդիրի կառուցվածքը, հաստությունը, դիմացկունության աստիճանը և թե պլաստիկե ներդիրը ինչպես կարող է ինքնակպչուն ժապավենով ամրանալ գլխարկին (որը տեխնիկապես անհնար է), ուստի համոզվելով, որ ՓԲԸ-ի տնօրինությունը աշխատում է ամեն կերպ խոչնդոտել պայմանագրի կնքմանը, որոշեցինք հրաժարվել հիշյալ պայմանագիրը ստորագրելուց,

այդ մասին 30.03.2021թ. Վ-005 գրությամբ տեղյակ պահելով «Երքաղլույս» ՓԲԸ-ի տնօրենին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի սահմանում է՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի կամ ծառայության հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը»: Ըստ ներկայացված հրավերի տեխնիկական բնութագրի մատակարարվող ապրանքի արտաքին տեսքը պետք է համապատասխանի ներկայացված նմուշին: Տվյալ դեպքում՝ տեխնիկական բնութագրում նախ ամբողջությամբ և հստակ նկարագրված չէ մասնավորապես գլխարկի ներդիրի հատկանիշները, բացի այդ մեզ չի տրամադրվել պահանջվող գլխարկի նմուշ, ինչը պատճառ կդառնար ՓԲԸ-ի ղեկավարության կողմից տարբեր մեկնաբանությունների և արհեստական խոչընդոտների հարուցման մատակարարված ապրանքները տեխնիկական բնութագրին համապատասխան չլինելու պատճառաբանություն առաջ քաշելու համար: Վերը շարադրվածն է պայմանագիրը մեր կողմից չստորագրելու միակ պատճառը, որում ի սպառ բացակայում է «Վանգակ» ՍՊԸ-ի մեղքը, ուստի խնդրում ենք ՍՊԸ-ին Գնումների մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը մերժել»:

3. <u>«Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երքաղլույս» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.04.2021թ. թիվ 68/418 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Վանգակ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջով՝ «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ն, որակավորման և պայմանագրի ապահովումները և պայմանագրի ստորագրված օրինակը՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը

(16.03.2021թ.) և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, «Երքաղլույս» ՓԲԸ-ին չի ներկայացրել մինչև ներառյալ 30.03.2021թ.:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով մերժել Ընկերության կողմից ներկայացված հայտը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն առաջարկել է, ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի պահանջներով, կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/93 ընթացակարգի շրջանակներում 16.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ն:

2.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ 16.03.2021թ.-ին Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, հետևաբար զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2021թ. թիվ 26/26-1/5379-2020

գրությունը, «Երքաղլույս» ՓԲԸ-ի 02.04.2021թ. թիվ 68/418 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Վանգակ» ՍՊԸ-ի 19.04.2021թ. դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

Այսպես, «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 16.03.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ 16.03.2021թ.-ին Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, հետևաբար զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպես, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.3-րդ, և 9.4-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և

պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում, ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ՝ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որը չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:</u>***

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման</u>***

<u>ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:</u>

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ն հրաժարվել է «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-21/7» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, որի հետևանքով զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից դիրքորոշմամբ ներկայացված հետևյալ դիտարկմանը. «*Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի սահմանում է՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի կամ ծառայության հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Ըստ ներկայացված հրավերի տեխնիկական բնութագրի մատակարարվող ապրանքի արտաքին տեսքը պետք է համապատասխանի ներկայացված նմուշին: Տվյալ դեպքում տեխնիկական բնութագրում նախ ամբողջությամբ և հստակ նկարագրված չեն մասնավորապես գլխարկի ներդիրի հատկանիշները»,* ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը ո՛չ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների և ո՛չ էլ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, ինչպես նաև Ընկերության կողմից հանձնաժողովից գրավոր չի պահանջվել հրավերի պարզաբանում, այլ ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը՝ ներկայացվել է գնային առաջարկ, և վերջինս 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է

ընտրված մասնակից, ուստի նման դիտարկումը սույն ընթացակարգի շրջանակներում չի կարող քննության առարկա հանդիսանալ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից դիրքորոշմամբ ներկայացված պայմանագրի չկնքման համար հիմք հանդիսացած հետևյալ դիտարկմանը. «*Կարել ենք տաբատի ու բաճկոնի մեկ օրինակ և ներկայացրել «Երքաղլույս» ՓԲԸ-ի տնօրինության հաստատմանը: Տնօրինությունը հավանություն չի տվել ներկայացված գործվածքների բաղադրությանը»,* ապա սույն մասով հարկ եմ համարում ընդգծել հետևյալը.

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ ***Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով*** (այսուհետ՝ պայմանագիր) ***սահմանված կարգով***, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին ***մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը*** (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են հետևյալ ընդհանուր պայմանները՝

- ***<u>Վաճառողը պետք է ներկայացնի նմուշի մեկ օրինակ,</u>***
- ***<u>Վաճառողը ներկայացնում է կտոր (որից կարվելու է արտահագուստը):</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի համաձայն՝ Գնորդին ապրանքի նմուշի և կտորի ներկայացնելու պարտավորություն Վաճառողը ստանձնում է միայն կողմերի միջև կնքվելիք պայմանագրով: Հետևաբար արձանագրում եմ, որ քանի դեռ Ընթացակարգի արդյունքներով կողմերի միջև պայմանագիր չի կնքվել, «Վանգակ» ՍՊԸ-ն, չհանդիսանալով Վաճառող, նման պարտավորություն չի ստանձնում, ուստի գտնում եմ, որ Ընկերության կողմից դիտարկմամբ ներկայացված փաստը չի կարող քննության առարկա դառնալ նախքան պայմանագիր կնքելը և հիմք հանդիսանալ Ընկերության կողմից պայմանագրի չկնքման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.04.2021թ. թիվ 26/26-1/5379-2020 գրությամբ «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**